

Ապրանքի ծագման տեղանուններ

Գրանցման համար	10.1
Հայտի համար	2014005
Հայտի ներկայացման թվականը	29.05.2014
Ծագման երկիրը	GE
Գործողության երկարաձգման թվական	10.07.2034
Երկարաձգված գործողության ավարտ	29.05.2034
Հրատարկվող տեղանունը	ՄԱՆԱՎԻ, MANAVI, MAHABI մաննջո
ԱԾՄԴ-ի դասը	33
Ապրանքի տեսակը կամ կոնկրետ ապրանքը	գինի
Ապրանքի հատուկ որակի նկարագրությունը՝	

«Մանավի» ծագման տեղանվամբ սպիտակ չոր բարձր որակի գինի է:
«Մանավի» գինի պատրաստելու համար բերքի հավաքը անցկացվում է երբ շաքարի պարունակությունը խաղողի մեջ հասնում է 190 գ/դմ³ և տիտրվող թթվայնությունը՝ 5,5-7,5 գ/դմ³:
«Մանավի» ծագման տեղանվամբ սպիտակ չոր բարձրորակ գինին պատրաստվում է Կախուրի մցվանե խաղողի տեսակից: Թույլատրվում է օգտագործել մինչև 15% Ռկացիտեի տեսակի խաղող:
«Մանավի» գինին բնութագրվում է բաց ծղոտագույնից մինչև ծղոտագույն, մինչև կանաչավուն, համը՝ նուրբ, ներդաշնակ, թարմացնող, մրգերի համերով, տեսակային բույրով և զարգացած փնջով:
«Մանավի» գինու քիմիական տվյալները պետք է համապատասխանեն հետևյալ ցուցանիշներին.
սպիրտի ծավալային պարունակությունը՝ 10,5-12,5%
տիտրվող թթվությունը՝ 5-7 գ/դմ³
ցնդող թթուները՝ 1գ/դմ³ ոչ ավել
շաքար՝ 0,3 գ/դմ³

էքստրակտի զանգվածի բերված խտությունը՝ 16 գ/դմ³ ոչ ավել
ընդհանուր ծծմբի երկօքսիդի զանգվածի խտությունը՝ 210 մգ/դմ³ ոչ ավել
ազատ ծծմբի երկօքսիդի խտությունը՝ 30 մգ/դմ³ ոչ ավել:

Կապն աշխարհագրական ծագման հետ՝ ծագման տեղանվան կամ աշխարհագրական նշման դեպքում՝ Մանավի միկրոշրջանում հունքային բազալի տարածքները կազմում են մոտ 346 հա:
Միկրոշրջանում ստացված բերքը միջինում կկազմի 2425 տ: 1 տոննայից 65 դեկալիտր ստանալու դեպքում կարելի է ստանալ 157000 դեկալիտր գինենյութ:
Մանավի միկրոշրջանի աշխարհագրական դիրքը լեռնադաշտային է, թույլ մասնատված մակերևույթով, կլիման անցողիկ է չոր մերձարևադարձայինից մինչև չափավոր խոնավ մերձարևադարձային, մուգ շագանակագույն սևահողային կարբոնատ հողերով: Կախուրի մցվանե տեսակի հատուկ հատկությունները որոշում են «Մանավի» գինու առանձնահատուկ որակը:

Աշխարհագրական գոտին՝ «Մանավի» խաղողագործության յուրահատուկ շրջան է, որը գտնվում է Գարա Կախեթիում, Սագարեջո վարչական շրջանում, Ցիվ-Գոմբոր լեռնաշղթայի հարավային ստորոտներում և հարակից լանջերին, պայմանավորված 41°44' հյուսիսային լայնությամբ և 45°27' արևելյան երկայնության և գտնվող կոորդինատներով: Արդյունաբերական խաղողի այգիները հիմնականում գտնվում են 450-800մ բարձրության վրա: Իվերական բարձրության ֆիզիկա-աշխարհագրական այս մասի առանձնահատկությունը որոշվում է նրա համատեղ բլրահարթավայրային, ալիքավոր, թույլ մասնատված մակերևույթով և տեղանքով, որը անցնում է մայրցամաքային կլիմայից դեպի ծովային:
«Մանավի» –ի միկրոշրջանը ներառում է հետևյալ գյուղերը՝ Թոխլիաուրի, Մանավի, Բուրդիանի, Գիորգիցմինդա, Անտոկի, Մարիամջվարի, Դիդի Չախլուրի, Պատառա Չախլուրի, Կակաբեթի և Վերխվիանի: